Արձանագրություն թիվ 6

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

23 հունվարի 2018թ. ք.Իջևան

Նախագահ՝ Ա.Շ.Մարգարյան

Քարտուղար՝ Ք.Հ.Մխիթարյան

Կիրառական արվեստի ֆակուլտետի խորհրդի ընդլայնված նիստին մասնակցում էին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրեն Ս.Առաքելյանը, գիտական խորհրդի քարտուղար Մ.Աթոյանը,ուսումական վարչության պետ Ա.Դավթյանը, խորհրդի անդամները, ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը և կուրսերի ավագները:

ՕՐԱԿԱՐԳ

1. Դեկանի կիսամյակային հաշվետվություն:
   /զեկուցող Ա.Շ.Մարգարյան/
2. 2017-18ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում:
   /զեկուցող Ա.Շ.Մարգարյան/
3. Ցուցահանդեսների կազմակերպման, դասախոսական կազմի և ուսանողների ներգրավվածության աստիճանի բարձրացման ուղղիների քննարկում:
   /զեկուցող Ա.Շ.Մարգարյան/
4. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ - Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը: Նա ներկաներին տեղեկացրեց, որ ըստ ֆակուլտետի խորհրդի հաստատված աշխատանքային պլանի հերթական նիստում նախատեսված է չորս հարց:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը:

Նա ներկայացրեց 2017թ. օգոստոսի քսանութից մինչև այսօր ֆակուլտետում իրականացված գործընթացների վերաբերյալ հաշտվետվություն՝ հիմք ընդունելով մասնաճյուղի զարգացման 2016-2020 թթ. Ռազմավարական ծրագիրը:

Ընդունված կարգի համաձայն ուս.տարվա սկզբին քննարկվում և հաստատվում են յուրաքանչյուր ստորաբաժանման աշխատանքային պլանները և նրանց իրականացման ժամանակացույցերը՝ հաշվի առնելով ընթացիկ տարվա առանձնահատկությունները:

2017թ. սեպտեմբերի 1-ից ֆակուլտետում գործող երեք կրթական ծրագրերից <<Համակարգչային գրաֆիկա>> ծրագրի II-րդ կուրս փոխադրվել էին երեք ուսանող (մնացածները զորակոչվել էին ՀՀ ազգային բանակ): Նրանց հետագա ուսումնառությունը այդ կազմով նպատակահարմար չէր և հակասում էր ԵՊՀ ուսանողական ակադեմիական խմբերի նորմաների պահանջներին, ուստի վերոնշյալ ուսանողները դիմեցին տնօրենությանը՝ հետագա ուսումնառությունը <<Դիզայն>> կրթական ծրագրով շարունակելու խնդրանքով, ինչը և բավարարվեց:

Մասնաճյուղում ընդունված կարգի համաձայն յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբնին քննարկվում և հաստատվում են յուրաքանչյուր ստորաբաժանման աշխատանքային պլանները, նրանց իրականացման ժամանակացույցերը՝ հաշվի առնելով ընթացիկ տարվա առանձնահատկությունները:

Ուս. տարվա սկզբին ֆակուլտետն ունի 68 ուսանող(46 վճարովի, 20+2): Ֆակուլտետի գործունեության թափանցիկությունը ապահովելու նպատակով դեկանատի, ամբիոնի և ֆակուլտետի խորհուրդի նիստերի կազմակերպման ժամանակացույցերը , նրանց քննարկվող հարցերի մասին նախապես տեղեկացվում է 19 աշխատակիցներին (13 դասախոս, 6 ուսումնաօժանդակ) և ուսանողներին , իսկ կայացրած որոշումները, մասնավորապես ստուգարքներից և քննություններից

անմիջապես հետո գնահատման ամփոփ տվյալները փակցվում են հայտարարությունների տախտակին և տեղադրվում մասնաճյուղի պաշտոնական կայք-էջում:

Հարկ է նշել, որ դասավանդվող բազմաթիվ դասախոսություններ անց են կացվում նախօրոք պատրաստված էլեկտրոնային ցուցադրությունների ուղեկցությամբ, ինչը ավելի մատչելի և արդյունավետ է դարձնում ուսուցման պրոցեսը: Մասնագիտական առարկաների համար կիրառվում են դասավանդման նոր մեթոդներ և մոտեցումներ:

Յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում ֆակուլտետում անց են կացվում բաց դասեր՝մաստերկլաս, դասալսումներ, փոխադարձ դասալսումներ՝նախապես հաստատված գրաֆիկի համաձայն:

Ա.Շ.Մարգարյանը ընդգծեց նաև ֆակուլտետի ուսանողության շրջանում պարբերաբար իրականացվող հարցումների կարևորությունը, որը հնարավորություն է տալիս վերհանելու բացթողումները և փնտրելու նրանք վերացնելու ուղիները:

Յուրաքանչյուր ուսումնական տարի ֆակուլտետի նյութատեխնիկական բազան համալրվում է և նոր կրթական ծրագրերի իրականացման համար ստեղծվում կամ վերազինվում նոր արվեստանոցներ և լաբարատորիաներ: Այս տարի կապիտալ վերանորոգվել է << Հագուստի մոդելավորում>> արվեստանոցը:

Գաղտնիք չէ , որ յուրաքանչյուր մասնագիտության կայացման , զարգացման և հաջողության գրավականը դիմորդների մեծ հոսքի ապահովումն է:Այս նպատակով ֆակուլտետի մի խումբ աշխատակիցներ պարբերաբար այցելում են մարզի հանրակրթական դպրոցներ, հանդիպում բարձր դասարանի աշակերտների հետ, լուսաբանում և ներկայացնում ֆակուլտետում իրականացվող աշխատանքները և հրավիրում մասնաճյուղ՝ տեղում ծանոթանալու կրթական ծրագրերի իրականացման պրոցեսների հետ:

Զեկուցողը նշեց, որ 2017-2018 ուստարվա առաջին կիսամյակի ընթացքում բոլոր կուրսերի ուսանողները,դասախոսների ղեկավարությամբ, իրականացրել են պլեներենային աշխատանքներ՝ մարզի տարբեր գեղատեսիլ վայրերում:

Ֆակուլտետի գործունեության թափանցիկությունը ապահովելու նպատակով դեկանատի, ամբիոնների և ֆակուլտեի խորհրդի նիստերի կազմակերպման ժամանակացույցերը, նրանց քննարկվող հարցերի մասին նախապես տեղեկացվում են աշխատալիցներին, ուսանառողներին իսկ կայացած որոշումները էիրազեկվում:

Յուրաքանչյուր ստուգարքից և քննությունից անմիջապես հետո գհահատման ամփոփ տվյալները փակցվում են հայտարարությունների տախտակին և տեղադրվում մասնաճյուղի պաշտոնական կայքէջում: Թափանցիկ է իրականացվում նաև ամեն կիսամյակի կրթաթոշակների նշանակումը և զեղչերի կատարումը , քանզի վերջիններիս հատկացումները իրականացնում են ուսանողական կառույցները և ներկայացնում ֆակուլտետի մանդատային հանձնաժողովին:

Օրակարգի երկրորդ հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա. Շ.Մարգարյանը: Նա ներկայացրեց 2017-2018 ուստարվա առաջին կիսամյակի ստուգարքների և քննությունների արդյունքները / առանց լուծարքային շրջանի / և նշեց , որ Ի-ին կիսամյակի բոլոր ստուգարքները , ընթացիկ և եզրափակիչ քննությունները անց են կացվել համաձայն նախապես հաստատված ժամանակացույցի, որին բացի մեկ ուսանողից մասնակցել են ֆակուլտետի բոլոր ուսանողները:

Առաջադիմությունը ըստ կուրսերի խիստ տարբեր է և ունի հետևյալ տեսքը.

Դիզայն Ի-ին կուրս /22 ուսանող/ – 50%

Դիզայն II -ին կուրս/13 ուսանող-/-92,3%

Դիզայն III -ին կուրս/9 ուսանող/-88,9%

Դիզայն IV -րդ կուրս/10 ուսանող/-90%

Կիրառական արվեստ III-րդ կուրս/7 ուսանող/ -85,7%

Կիրառական արվեստ IV-րդ կուրս/7 ուսանող /-85,7%

Ֆակուլտետի ընդհանուր առաջադիմությունը կազմել է 76,47%,ընդ որում անվճար համակարգում 100%, վճարովի համակարգու 65,96%: Գնահատականների սպեկտրը լայն է և որպես կանոն բարձր է մասնագիտական բլոկի առարկաներից և ցածր հումանիտար և ոչ մասնագիտական առարկաներից: Մասնավորապես „Գծանկարչություն"և„Գունանակրչություն"առարկաներից ստացած գնահատականները բարձր են.ինչը ավելի հավանական է,առաջադրանքների պարզության հետևանք է , այլ ոչ թե բարձր վարպետության արդյունք, իսկ „Գծագրական երկրաչափություն-1" և „Մակետավորում և աշխատանք նյութով-2" առարկաներից գնահատվել են ցածր գնահատականներ:

Ֆակուլտետում անցկացված բոլոր քննությունները և ստուգարքները վերահսկվել են ինչպես ֆակուլտետի ադմինիստրացիայի, այնպես էլ ուսումնամեթոդական վարչակազմի կողմից: Այս տարի քննությունների անցկացման մեջ,որոշ քննություններից հետո տեղի ունեցավ փոփոխություններ,մասնավորապես գնահատականները նշանակվում էին ուսանողների ներկայությամբ, ինչը դրական արձագանք գտավ ուսանողների շրջանում:Քննության ընթացքում ուսանողը ներկայացնում էր իր աշխատանքը և գնահատվում լսելով իր բացթողնումները և թերությունները:

Օրակարգի երրորդ հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա. Շ.Մարգարյանը: Նա ներկայացրեց 2017-2018 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում ցուցահանդեսների կազմակերպման և նրանցում պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողների մասնակցության աստիճանի բարձրացման ուղիները: Համաձայն աշխատանքային պլանի երկրորդ կիսամյակում նախատեսված է բազմաթիվ միջոցառումներ `այդ թվում "Մայրության և գեղեցկության" տոնին, Մեծ եղեռնի զոհերի հիշատակին և Հաղթանակի օրվան նվիրված ցուցահանդեսներ, որոնց կազմակերպման և իրականացման համար առաջին կիսամյակում տրվել են հանձնարարականներ ուսանողներին և դասախոսներին, որպեսզի համապատասխան ժամկետներում ներկայացվեն աշխատանքներ, ինչից

հետո մասնագիտական հանձնաժողովի որոշմամբ կառանձնացվեն ցուցադրությանը արժանի աշխատանքները:

Օրակարգի չորրորդ հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա. Շ.Մարգարյանը: Նա տեղեկացրեց 2017-2018ուստարվա երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների մասին:Նախապատրաստական աշխատանքները հստակ նշված են աշխատանքային պլաններում, սակայն կցանկանայի տեղեկացնել որ անահատական բեռնվածությունների մեջ կատարվել են որոշ փոփոխություններ , մասնավորապես դիզայն երրորդ կուրսում դասավանդվելիք „Գեղարվեստական լուսանկարչություն" դասախոս Գ.Աղաբեկյանի փոխարեն կդասավանդի Ա. Աղաբաբյանը, դիզայն երկրորդ կուրսում „Փիլիսոփայության հիմունքներ,, առարկայի դասախոս Է.Կյուրեղյանին կփոխարինի Հ.Խաչատուրյանը, իսկ „Արվեստի պատմություն-2"առարկայի դասախոս Ա.Ղազարյանին կփոխարինի Հ.Մովսիսյանը:

1. Կերամիկական վառարանի հարցը
2. Առարկայական ծրագրերի և պորտֆոլիոնների թարմացման հարցը
3. Ավարտակն աշխատանքներիպատշաճ իրականացամն
4. Ցուցահանդեսների կազմակերպման հարցը:

Այնուհետև նշվեց, որ դեռևս սկսած նախորդ ուստարվանից երկրորդ կիսամյակից ուսանողների ներկայացրած էսքիզները կուրսային և ավարտական աշխատանքների, ինչպես նաև "Աշխատանք նյութի վրա" առարկայից, որոնք կարժանանան ամբիոնի մասնագետների բարձր գնահատականին, կազատվեն ուսումնական նյութեր ձեռք բերելու հոգսից (մասնաճյուղի միջոցների հաշվին կտրամադրի կավ, ներկեր, թելեր և այլն) :

Վերջում ելույթ ունեցավ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրեն Ս.Առաքելյանը և կատարեց որոշ առաջարկներ իրականացված աշխատանքների մասին , որից հետո տրվեցին հանձնարարականներ .պահանջկոտ լինել ուսանողների նկատմամբ և տրված

հանձնարարությունը լինի պատշաճ մակարդակի,վերանայել առարկայական ծրագրերը և քիչ ժամաքանակ հատկացնել յուրաքանչյուր առաջադրանքներին,փոխել պլանավորումը և շատ աշխատանքներ տալ ուսանողին՝ ինքնուրույն աշխատելու համար: Կիրառական խնդիրներ դնել ուսանողների առաջ և օգնել նրանց լուծել այն:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա.Շ.Մարգարյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ք.Հ.Մխիթարյան